# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 30

04/09/2017

05-013-065-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի և ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը , որ 065-001 ծածկագրով 0,09 հա մակերեսով 36 փողոց թիվ 67 հասցեում գտնվող բնակավայրի նպատակային նշանակության , բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը համայնքի բազայում և քարտեզագրման ցուցակում սխալմամբ նշված է անհայտ , որի պատճառով ՀՀ Կառավարության 06.04.2006թ. թիվ 538-Ն որոշման մեջ նշված հողամասը չի հաշվառվել որպես համայնքային սեփականություն և պետ գրանցում չի ստացել.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 05-013-065-001 կադաստրային ծածկագրով 0,09 հա մակերեսով 36 փողոց թիվ 67 հասցեում գտնվող բնակավայրի նպատակային նշանակության , բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ նշված հողամասը ներկայացնելու պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

2. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

6. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**